ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2022 թվական թիվ 192-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, 76-րդ հոդվածի 3-րդ մասի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից 10,53512 հեկտար ընդհանուր մակերեսով հինգ կտոր հողամասերի պահպանության գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու, դրանց բերրիությունը բարձրացնելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով օգտագործման տրամադրել վարձակալության իրավունքով՝ համաձայն հավելվածի:
2. Հողամասերն օգտագործման տրամադրել մրցութային կարգով, լոտերի թիվը սահմանել հինգ:
3. Հողամասերի տարեկան վարձավճարի մեկնարկային չափերը սահմանել սույն որոշման 1-ին կետի հավելվածում նշված լոտերին համապատասխան, համաձայն հավելվածի:
4. Մրցույթային մեկ քայլը սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով:
5. Հողամասերը վարձակալությամբ օգտագործման տրամադրել տասը տարի ժամկետով՝ մինչև 2032 թվականի նոյեմբերի 30-ը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

14 հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ախուրյան համայնքի ավագանու
2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 192-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի ցանկն ըստ լոտերի

Լոտի համարը	Գտնվելու վայրը	Հողամասի ծածկագիրը	Նպատակային նշանակությունը, հողատեսքը	Մակերեսը (հա)	Հաղորդակցության ուղիների առկայությունը	Վճարի մեկնարկային չափը (դրամ)
1.	Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Կառնուտ	08-053-0124-0020	Գյուղատնտեսական նշանակության արոտ, անջրդի, 4-րդ կարգ	8,44789	Առկա է	23000
2.	Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան	08-077-0220-0012	Գյուղատնտեսական նշանակության վարելահող, ջրովի 3-րդ կարգ	1,03723	Առկա է	25000
3.	Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան	08-077-0215-0001-001	Գյուղատնտեսական վարելահող, ջրովի 3-րդ կարգ	0,50	Առկա է	12000
4.	Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան	08-077-0215-0001-002	Գյուղատնտեսական վարելահող, ջրովի 3-րդ կարգ	0,50	Առկա է	12000
5.	Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան	08-077-0220-0001	Գյուղատնտեսական վարելահող, ջրովի 3-րդ կարգ	0,05	Առկա է	2000